ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒՆԻՍ 2017
JANUARY-JUNE

ՏԵՂԵԿԱԳԻՐ
NEWSLETTER

Հայկական Կարմիր խաչի ընկերություն
Armenian Red Cross Society
Պարոնյան 21/1 Paronyan
Հայաստան, Երևան, 0015, Yerevan, Armenia

www.redcross.am
redcross@redcross.am

ՀՀ ԱԻՆ և ՀԿԽԸ համագործակցությունը շարունակվում է

Ապրիլի 4-ին Հայկական Կարմիր խաչի ընկերության պատվիրակությունը՝ նախագահ Մխիթար Մնացականյանի գլխավորությամբ, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությունում հանդիպեց ԱԻ նախարար Դավիթ Տոնոյանի հետ:

Պարոն Դ. Տոնոյանը, ողջունելով պատվիրակության անդամներին, նշեց, որ քաջ ծանոթ է ԱԻՆ-ՀԿԽԸ համագործակցությանը և հենց վերջերս է ականատեսը եղել ՀԿԽԸ Առաջին օգնության մասնագետների աշխատանքին, ովքեր ամենաբարձր որակի առաջին օգնություն են ցույց տվել Սուրենավան-Երասխ ավտոճանապարհին տեղի ունեցած ավտովթարից տուժածներին:

ՀԿԽԸ նախագահ Մ.Մնացականյանը ներկայացրեց կազմակերպության գործունեությունը Աղետների կառավարման ոլորտում, որը ռազմավարական ուղղություն է Ազգային ընկերության համար:

- Մեր հիմնական գաղափարախոսության մեջ է նշված՝ աջակցել Կառավարությանը:1998 թվականից սկսած աշխատում ենք այս ոլորտում նախապատրաստման, արձագանքման: Մեր համագործակցությունը մեծ պատիվ է մեզ համար, և ամրագրված է եղել փոխըմբռնման հուշագրով: Ինձ համար ամենամեծ գնահատականը նախարարի՝ քիչ առաջ ասված խոսքերն են:

Այնուհետև ԱԻ նախարարը մանրամասն հետաքրքրվեց համայնքների դիմակայունության ուղղությամբ ՀԿԽԸ գործունեությամբ և հաջողություններով, Կամավորության օրենքի ընդունման աշխատանքներում ներգրավվածությամբ:

Պարոն Տոնոյանը հայտնեց, որ 22 համայնքներում ստեղծվելու են ջոկատներ, որոնց անդամները պետք է լինեն հրշեջ-փրկարար և առաջին օգնություն ցուցաբերող: Այստեղ ավելի սերտ համագործակցություն պետք է հաստատվի ԱԻՆ-ի և Հայկական Կարմիր խաչի միջև՝ բարձր մակարդակի առաջին օգնության հրահանգիչներ պատրաստելու համար:

RA Ministry of Emergency Situations and Armenian Red Cross Society signed a protocol on the Extension of Memorandum of understanding

On 4 April, in the Ministry of Emergency Situations, Armenian Red Cross Society delegation, led by Mkhitar Mnatsakanyan, ARCS President, met with David Tonoyan, Minister of Emergency Situations.

Mr. D. Tonoyan welcomed the members of delegation and noted that he is familiar with the cooperation between the Ministry and ARCS and was recently witnessed the work of the Red Cross First Aid instructors, who delivered the highest quality First Aid to the victims of the accident on the Surenavan -Yeraskh highway.

M. Mnatsakanyan, ARCS President, presented the activities of the organization in the Disaster Management direction, which is a strategic direction for the organization.

"To be auxiliary to the Government is supposed by the Ideology of our Organization. Since 1998 we have been working in this area, such as preparedness and response. Our partnership is a great honor for us, and is enshrined in the Memorandum of Understanding. For me, the highest appreciation of our work are the words of gratitude of the Minister, which he said above".

Then the Minister asked some questions on ARCS activities and achievements in the sphere of resilient communities, as well as involvement in the adoption of the Law on Volunteering. Mr. Tonoyan said that special brigades of firemen-rescuers and First Aid providers will be established in 22 communities. And here is expecting a closer cooperation between the MES and ARCS to train high level First Aid instructors.

ARCS President mentioned that Armenian Red Cross is ready to support all the initiatives of the Ministry of Emergency

ՀԿԽԸ նախագահը նշեց, որ Հայկական Կարմիր խաչը՝ իր գործառույթների շրջանակներում պատրաստ է աջակցելու ԱԻ նախարարության բոլոր նախաձեռնություններին:
ՀՀ ԱԻ նախարար Դ. Տոնոյանը և Հայկական Կարմիր խաչի ընկերության նախագահ Մ. Մնացականյանը ստորագրեցին «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտում համագործակցության և փոխօգնության մասին ՀՀ ԱԻ նախարարության և Հայկական Կարմիր խաչի ընկերության միջև» Փոխըմբռնման Հուշագրի գործողության ժամկետի երկարաձգման մասին արձանագրություն:

Եռակողմ համաձայնագիր ԱԻՆ-ի, ՀԿԽԸ-ի և ԿԽՄԿ-ի միջև

Հունիսի 28-ին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, Հայկական Կարմիր խաչի ընկերության և Հայաստանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պատվիրակության միջև ստորագրվեց «Հայաստանի Տավուշի մարզում քաղաքացիական պաշտպանության փրկարարական ծառայության կարողությունների զարգացման ոլորտում 2017-2018 թթ. Համագործակցության ծրագիր» եռակողմ համաձայնագիրը: Ծրագիրը ստորագրեցին ՀՀ ԱԻ նախարար Դավիթ Տոնոյանը, Հայկական Կարմիր խաչի ընկերության նախագահ Մխիթար Մնացականյանը և ՀՀ-ում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պատվիրակության ղեկավար Կարոլին Դույեզը:
Ծրագրի նպատակն է սահմանամերձ համայնքների բնակչության պաշտպանությունն ու բնակչության պատրաստվածության մակարդակի բարձրացումը:
Ծրագրով նախատեսվում է սահմանամերձ համայնքներում գործող Արտակարգ իրավիճակների նախարարության հենակետերում իրականացնել առաջին բուժօգնության վերապատրաստման դասընթացներ, ինչը թույլ կտա տեղում գործող ուժեղացված փրկարարական ուժերին ավելի արագ և արդյունավետ արձագանքել արտակարգ իրավիճակներին: Նախատեսվում է նաև վերապատրաստման դասընթացներ անցկացնել համայնքների մանկապարտեզների և դպրոցների մանկավարժական կազմի հետ, որպեսզի վերջիններս էլ իրենց հերթին սովորեցնեն երեխաներին անվտանգության վարքականոնները տարատեսակ աղետների և արտակարգ իրավիճակների ժամանակ: Բնակչության պաշտպանության և պատրաստվածության դասընթացների կարևորագույն բաղադրիչներից է նաև միջազգային մարդասիրական իրավունքի ուսուցանումը:

Ազգային ընկերությունների ղեկավարների հանդիպումը Ալմաթիում

Մայիսի 16-17-ը Ղազախստանում Ալմաթիում, տեղի ունեցավ Արևելյան Եվրոպայի, Բալթիկայի, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի Ազգային ընկերությունների ղեկավարների հանդիպումը, որին մասնակցում էր նաև Հայկական Կարմիր խաչի ընկերության պատվիրակությունը: Հանդիպմանը ներկա էին նաև ԿԽՄՖ փոխնախագահ Ֆարնչեսկո Ռոկան, ԿԽՄՖ

Situations, in the frames of its mandate.
D. Tonoyan, Minister of Emergency Situations of RA and M. Mnatsakanyan, President of Armenian Red Cross Society, signed a protocol on the Extension of "Memorandum of understanding between RA MES and ARCS on cooperation and mutual assistance in the field of Civil Protection during Emergency Situations.

Tripartite agreement between the Ministry of Emergency Situations, ARCS and the ICRC

On 28 June, Tripartite agreement between the the Ministry of Emergency Situations, Armenian Red Cross Society and the International Committee of the Red Cross Delegation in Armenia was signed on the "Cooperation project in the field of Rescue Service Civil Protection capacity development in Tavush region, Armenia, in 2017-2018". The project was signed by Davit Tonoyan, RA MES Minister, Mkhitar Mnatsakanyan, ARCS President and Caroline Douilliez, Head of ICRC Delegation in Armenia.
The project aimed at the protection and raising awareness level of border community population.
In the frames of the project, in the bases of MES civil defense groups First aid courses will be conducted, which will allow the local rescues service forces to respond more quick and effective manner. Training will be conducted for the kinder gardens and schools staff, and the later will teach the children safety rules and during various emergencies and disasters. One of the important parts of the population preparedness and protection training is the International Humanitarian Law.

Leadership Meeting of National Societies in Almaty, Kazakhstan

On 16-17 May, in Kazakhstan, Almaty, Leadership Meeting of Eastern European, Baltic, Southern Caucasus and Central Asian National Societies took place, where Armenian Red Cross Society delegation participated as well. Francesco Rocca, Vice President, IFRC, Simon Missiri, Regional Director,

տարածաշրջանային տնօրեն Սայմոն Միսիրին, ԿԽՄԿ տարածշրջանային տնօրենի տեղակալ Մարտին Սչուպը, ԿԽՄՖ և ԿԽՄԿ այլ ներկայացուցիչներ:

Ազգային ընկերությունների ղեկավարները՝ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի և Ղազախստանի Կարմիր մահիկի հրավերով հավաքվել էին քննարկելու Եվրոպայի փոփոխվող մարդասիրական իրավիճակը, նոր միտումներն ու երկարաժամկետ տեսլականը: Ազգային ընկերությունները ներկայացրեցին իրենց երկրների մարդասիրական խնդիրները և Շարժման դերը՝ այդ խնդիրները հաղթահարելու հարցում:

Հայկական Կարմիր խաչի ընկերության Գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանն իր ելույթում ներկայացրեց տարածաշրջանի մարդասիրական իրավիճակը, այն մարտահրավերները, որոնց առնչվում է Հայաստանը, և թե ինչ գործունեություն է իրականացնում Ազգային ընկերությունը՝ մասնավորապես Սիրիահայերի ներհոսքի հետ կապված խնդիրներին արձագանքելու, ինչպես նաև Շարժման արձագանքման պլանի մշակման ուղղությամբ: Այն կապահովի Շարժման բազմակողմանի, տեղայնացված և անկախ արձագանքն այն մարդկանց կարիքներին, ովքեր տուժել են հակամարտությունից՝ Հայաստանի ներսում: Այս համատեղ Արձագանքման պլանը նման գործընթացի առաջին փորձն է, և հետագայում կարող է կիրառվել նաև այլ համատեքստերում.

- Կցանկանայի ընդգծել Կարմիր խաչի միջազգային կոմիտեի և ֆեդերացիայի, ինչպես նաև գործընկեր Ազգային ընկերությունների մեծ դերը, որոնք իրենց ներդրումն են ունենում Հայկական Կարմիր խաչի ընկերության զարգացման գործընթացում և արդյունավետ կերպով աջակցում են Ազգային ընկերության գործունեությանը: Շարժման բաղկացուցիչների աջակցությամբ և նրանց հետ սերտ համագործակցությամբ ՀԿԽԸ-ն հասնում է իր նպատակներին և երկրում իրագործում իր մարդասիրական առաքելությունը՝ շահառուներին արդյունավետ և ժամանակին տրամադրելով որակյալ ծառայություններ, ինչի համար մենք շնորհակալ ենք, - ասաց Ա. Եղիազարյանը:

Ազգային ընկերությունների ղեկավարները քննարկեցին նաև Շարժման բաղադրիչների գործունեության համակարգման, ինչպես նաև Գլխավոր

IFRC, Martin Schueepp, Deputy Regional Director (GVA), ICRC, and other high level officials attended the event.

The leaders of National Societies, gathered by the invitation of IFRC and Kazhakh Red Crescent to discuss Changing humanitarian landscape in Europe, new trends long term vision. The National Societies presented their vision related to humanitarian issues in their respective countries and Movement role in tackling those issues.

Dr. Anna Yeghiazaryan, Secretary General of Armenian Red Cross Society, presented in her speech the humanitarian situation in the Region, those challenges, that face Armenia in this regard, and what type of activites implements the National Society, particularly to respond the issues related with Syrian Armenians influx, as well as in the direction of Movement Contingency Planning development. This is the first attempt of this kind of joint Respond process, and further it can be applied in other contexts as well.

"I'd like to emphasize the huge rope of ICRC and IFRC, as well as partner National Societies, who have their input in Armenian Red Cross Society development process and efficiently support the activities of our National Society. ARCS reaches its goals due to the support and cooperation of Movement components and implements it mission providing the beneficiaries with qualified services, and we are very grateful for that," Dr. Anna Yeghiazaryan mentioned.

The leaders of National Societies discussed also Movement component coordination, Resource Mobilization Capacity Building, Communications issues, Preparations for General Assembly and Council of Delegates, Red Cross Forum, European Regional Conference 2018, and other questions common for the countries of the Region.

ասամբլեայի և պատվիրակների խորհրդի, 2018թ. Եվրոպական տարածաշրջանային համաժողովի Նախապատրաստական հարցեր, անդրադարձան ռեսուրսների մոբիլիզացիայի և հաղորդակցման խնդիրներին, որոնք ընդհանուր են տարածաշրջանի երկրների համար:

Քննարկում ՀԿԽԸ մարզային մասնաճյուղերի ղեկավարների հետ

Դեռևս 2014թ. իրականացված ինքնագնահատման արդյունքների հիման վրա Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ որպես առաջնահերթություն ընտրել է ՀԿԽԸ մարզային մասնաճյուղերի զարգացումը: Այդ կապակցությամբ մշակվել է զարգացման ռազմավարական պլան առաջիկա 3 տարվա համար: Պլանի արդյունավետ իրագործման նպատակով պարբերաբար իրականացվում են հանդիպումներ ու քննարկումներ ՄՄ ղեկավարների ու կամավորների հետ:

Նվերներ բազմազավակ մայրերին՝ ապրիլի 7-ի կապակցությամբ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը ապրիլի 7-ին՝ Մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ, Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի և գյուղական համայնքների 50 բազմազավակ կարիքավոր ընտանիքների տրամադրեց սննդի փաթեթներ և նվերներ: Միջոցառումն իրականացվել է Արմավիրի մարզպետարանի հետ համագործակցությամբ:

Կարմիր խաչի և կարմիր մահիկի համաշխարհային օրը

Մայիսի 12-ին՝ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի համաշխարհային օրվա կապակցությամբ, Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) Շառլ Ազնավուրի անվան հրապարակում (Մոսկվա կինոթատրոնի հարևանությամբ), 17:00 – 20:00 կազմակերպեց Շարժման գործունեության վերաբերյալ իրազեկման ակցիա:
Հրապարակում տեղադրվեցին տեղեկատվական տաղավարներ և Հայաստանում Կարմիր խաչի գործունեությունը ներկայացնող լուսանկարներ:
Կամավորներն անվաչմուշկներով շրջեցին Փոքր կենտրոնի փողոցներով՝ բաժանելով օրվա խորհուրդը ներկայացնող թռուցիկներ:

Discussion with the heads of ARCS Regional Branches

After the OCAC self – assessment workshop in 2014, Branch development was set as one of the priorities of Armenian Red Cross Society. 3 year development plan has been developed in this regard, and meetings and discussions are being held on regular basis for the efficient implementation.

Food parcels and presents from the Red Cross on the occasion of 7 April, the Day of Motherhood and Beauty

On the occasion of 7 April, the Day of Motherhood and Beauty, 50 families with many children received food parcels and presents form Armenian Red Cross Society. The event was organized cooperating with Armavir Regional Administration.

World Red Cross and Red Crescent Day

On 12 May, on the occasion of World Red Cross and Red Crescent Day, in the Square named after Sharl Aznavur (at Moscow Cinema), at 17:00-20:00 organized an awareness raising event. Informative tables, banners and photos were placed on the site, and the volunteers were disseminating flyers and souvenirs about the Day among the public on roller skates.

Ամեն տարի ամբողջ աշխարհում Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժումն աջակցում է ավելի քան 160 միլիոն մարդու՝ իր 17 միլիոն կամավորների և թվով 450 000 անձնակազմի ցանցի միջոցով:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը 2016 թվականի ընթացքում էլ բազմաբնույթ և նորարարական ծառայություններ է տրամադրել իր շահառուներին՝ խիստ հարմարեցված տեղական կարիքներին:

Սոցիալական աջակցությունից մինչև զարգացման ծրագրեր՝ Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իրականացնում է իր գործունեությունը կամավորների անխոնջ նվիրումի շնորհիվ:

- Կարմիր խաչի կամավորներն աշխատում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում՝ նվիրվածությամբ տրամադրելով իրենց ուժն ու ժամանակը, - ասաց ՀԿԽԸ նախագահ Մխիթար Մնացականյանը՝ Շարժման հիմնադիր Անրի Դյունանի ծննդյան օրվա կապակցությամբ: - Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի համաշխարհային շարժման օրը՝ Մայիսի 8-ը, մի հնարավորություն է բարձրաձայնելու ամբողջ աշխարհում միլիոնավոր կամավորների և անձնակազմի ներդրումն ու ձեռքբերումները: Նրանք ամեն օր ապացուցում են իրենց նվիրվածությունը մարդասիրության գաղափարին և ջանք չեն խնայում, որ յուրաքանչյուրը, ով օգնության կարիք ունի, անտեսված չմնա: Անդադար աճող խնդիրների բարդ համատեքստում ամենատարբեր կարիքներ ունեցող մարդկանց օգնելու մեր կարողություններն անընդհատ բարելավվում են: Մեր կամավորներն ու անձակազմը ստեղծագործ ու նորարարական ուղիներ են փնտրում՝ խոցելի խմբերին աջակցելու համար և օգնելու նրանց պատրաստվելու դիմակայել մարտահրավերներին և վերականգնվելու դժվարին իրավիճակներից հետո:

Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման բաղկացուցիչներն են Կարմիր խաչի միջազգային կոմիտեն, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիան, ինչպես նաև Կարմիր խաչի և Կարմիր մահիկի 190 ազգային ընկերությունները, որոնք մարդասիրական գործունեություն են իրականացնում ավելի քան 150 տարի:

Every year, around the world, the International Red Cross and Red Crescent Movement reaches more than 160 million people through its network of around 17 million volunteers and 450,000 staff.

In 2016, Armenian Red Cross Society reached its beneficiaries, building safer and stronger communities through a diverse and innovative range of services tailored to local needs. From social support to development programs, the ARCS provides these services through the tireless dedication of their volunteers.

"Red Cross volunteers are working in virtually every community, giving their commitment, energy and time," said ARCS President Mkhitar Mnathakanyan on the birthday of the Movement's founder, Henry Dunant, about 189 years ago.

"World Red Cross and Red Crescent Day, 8 May, is an opportunity to recognize the contribution and achievements of the millions of volunteers and staff members around the world who are keeping our commitment to humanity every day - by making the last mile effort to ensure that no one is left behind," he said. "In complex contexts with increasing vulnerabilities, our ability to access people in need is constantly changing, but our volunteers and staff are finding creative and innovative ways to adapt local solutions to reach people in need and help them prepare for, deal with and recover from these challenges."

The work of the International Red Cross and Red Crescent Movement – comprised of the International Committee of the Red Cross, the International Federation of Red Cross and Red Crescent Societies, and 190 National Red Cross and Red Crescent Societies draws on more than 150 years of humanitarian action.

Ծառատունկ Տավուշի մարզում՝ ի հիշատակ անհայտ կորածների

Ապրիլի 27-ին, Տավուշի մարզի Իջևան քաղաքում Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի աջակցությամբ և Տավուշի քաղաքապետարանի հետ համագործակցությամբ, «Սատարում անհայտ կորած անձանց ընտանիքներին» ծրագրի շրջանակներում նախաձեռնել էր ծառատունկ, որի նպատակն էր «Ղարաբաղյան հակամարտության հետևանքով Տավուշի մարզի անհայտ կորած անձանց հիշատակին նվիրված պուրակի» ստեղծումը: Այգում՝ անհայտ կորած անձանց հարազատները 12 հացենի տնկեցին՝ ի հիշատակ Ղարաբաղյան հակամարտության հետևանքով անհայտ կորած իրենց սիրելիների:

Tree planting in Tavush Region in the memory of Missing persons

On 27 April, Armenian Red Cross Society, with the support of the ICRC and cooperation with the Tavush municipality, initiated a tree planting in the frames of Accompanying Families of Missing Persons project. The aim of the initiative was the creation of "The garden in the memory of missing persons as a result of Karabakh conflict". The relatives of missing persons planted 12 ash-trees to commemorate their loved ones.

Ամառային ճամբար սիրիահայ երեխաների համար

Հունիսի 15-ին, Հայկական Կարմիր խաչի ընկերությունը սիրիահայ, ինչպես նաև հանրակացարանաբնակ 35 երեխաների համար Ծաղկաձորի Ռիպա հանգստյան տանը կազմակերպել էր 4-օրյա ամառային ճամբար:

Summer Camp for Syrian Armenian children

On June 15, 35 Syrian Armenian children, as well as their peers from dormitories participated in 4-day Summer Camp in Thakhkadzor, organized for them by Armenian Red Cross Society.

Առաջին օգնություն

Հայկական Կարմիր խաչի ընկերության Առաջին օգնության թիմը հունվարի – փետրվարի ամիսներին անցկացրել է տասնյակ դասընթացներ, մասնակցել Հանրային հեռուստատեսությամբ հեռարձակվող հաղորդաշարերի նկարահանումներին, ինչպես նաև ՀՀ ԱԻՆ կողմից իրականացվող վարժանքներին:

Կենդանի գրադարան սիրիահայ և տեղացի երիտասարդների մասնակցությամբ

Հունիսի 15-ին սիրիահայ երիտասարդները Կոմիտասի անվան կոնսերվատորիային հարակից այգում կազմակերել էին «Կենդանի գրադարան»: Նրանք որոշել էին տեղացիներին հաղորդակից դարձնել իրենց հետաքրքրող թեմաներին, և ընտրել էին իրենց սիրելի գրքերի միջոցով շփվելու տարբերակը: Նրանցից յուրաքանչյուրը մի գիրք էր դարձել, և ցանկացողին հատված էր ընթերցում հեղինակից: Երեք ստեղծագործության հետ ծանոթացած մարդը կարող էր որպես մրցանակ՝ Կարմիր խաչի խորհրդանշանով թխվածք ստանալ:
Ակցիան, որ անցկացվում էր Երիտասարդների կայուն զարգացում ծրագրի շրջանակներում, նպատակ ուներ նպաստելու սիրիահայ երիտասարդների ինտեգրմանը:
«Երիտասարդների կայուն զարգացումը» ծրագիրն իրականացվում է 2015թ. ապրիլից Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից՝ համագործակցելով Դանիական Կարմիր խաչի հետ՝ Դանիական Ռոսկիլ փառատոն-հիմնադրամի ֆինանսավորմամբ:
Ծրագիրը բաղկացած է 8 տեսակի միջոցառումներից, որոնք հնարավորություն են ստեղծում սիրահայ երիտասարդների համար կազմակերպելու և մասնակցելու երիտասարդական միջոցառումների, ինչպես օրինակ գրաֆիտի նկարչություն, քաղաքային այգեգործություն, ստեղծագործ խմբեր /պար, երգ, թատրոն/, նորարարական ճամբար, մեդիա փորձառություն, լուսանկարչական մրցույթ և այլն:
2015-16թթ, ծրագրին մասնակցել է մոտ 200 երիտասարդ: Ծրագիրը շարունակվում է նաև 2017թ.-ին՝ ընդգրկելով ևս 100 երիտասարդի:

First Aid

Armenian Red Ctoss Society First Aid team conducted number of First Aid trainings for various groups of population during January-February, participated in TV programs broadcasted on Public TV of Armenia, as well as in the simulation exercises organized by MES of Armenia.

Living library with the participation of Syrian Armenian and local youth

On June 15, Syrian Armenian youngsters organized a "Living library" at the garden at the Conservatory named after Komitas. They decided to share their interests with the locals and chose the option of communicating using their favorite books. Each of them became a book and was ready to read a piece from the favorite author. The person, who got acquainted with three works could receive a Red Cross cake as a present.
The event was organized in the frames of Youth Resilience Project, aimed at Syrian Armenian Youth integration.
The Project has been implementing since April, 2015, in cooperation with Danish Red Cross and by the finance of the Roskilde Festival - Foundation. The Project consists of 8 types of events, which allows Syrian Armenian youngsters to organize and participate in Youth events, such as graffiti, urban gardening, creative groups (dancing, singing, drama group), innovation camp, Media experience, photo contest, etc..
200 young people participated in 2015-2016. In 2017 the Program continues involving another 100 beneficiaries.